**Մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը Իջևանի թիվ 1 դպրոցում մասնակցեց Բերքի տոնին 17.10.2014թ.**

Իջևանի թիվ 1 դպրոցն այդ օրն անսովոր գեղեցիկ էր, երփներանգ ու աշնանային, երեխաներն՝ ավելի աշխույժ ու տոնական տրամադրությամբ: Դպրոցը նշում էր ավանդական դարձած բերքի տոնը: Յուրաքանչյուր դասարան իր գեղարվեստական համարը ներկայացնելուց բացի, գեղեցիկ աշնանային բերքով լեցուն սեղան էր բացել: Եվ ամեն մի սեղան ներկայացրել էր հայկական ավանդական որևէ ճաշատեսակ: Երեխաներին տոնի կապակցությամբ այցելեց Տավուշի մարզպետի տեղակալ Լևոն Սարգսյանը: Տնօրեն Աշոտ Փաշինյանի հետ շրջելով՝ նա աշակերտների հետ զրուցեց, շնորհավորեց և մաղթեց ուրախ տրամադրություն: